


**ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐԻ ՔԱՆԱԿԻ
2019թ. II ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական և որակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 100 ստորերկրյա ջրաղբյուրներում*, որոնք ներառում են 24 շատրվանող հորատանցք, 33 չշատրվանող հորատանցք և 43 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: 2019 թվականի մայիսին կատարվել է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ ազգային ցանցում ընդգրկված ջրաղբյուրների 40 դիտակետում, որոշվել է 40-ական ֆիզիկաքիմիական ցուցանիշ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք




Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնաղբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 1 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ներկայացվում են գրաֆիկների տեսքով: 2058 դիտակետում ընդհանուր լուծված աղերի (0.94 գ/լ) և նիտրատ իոնի (8.17 գ/լ) կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:






* Ստորերկրյա ջրերի դիտակետերի տեսակը, համարները, տեղադիրքը տրված է տեղեկագրի 99-րդ էջում աղյուսակի տեսքով:

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք




Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 13 բնադրյուրում, 6 շատրվանող և 16 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 15 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:









Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք




Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 6 բնադրյուրում, 9 շատրվանող և 7 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 8 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 8 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով (N1297 դիտակետում դիտվել են ծախսի փոքր արժեքներ՝ 0.1-0.3լ/վ):








Սևանի ջրավազանային կառավարման տարածք




Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 5 բնադրյուրում, 6 շատրվանոց հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 6 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 6 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:










Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 10 բնադրյուրում, 3 շատրվանող և 10 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 6 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 6 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:







Հարավային օրավազանային կառավարման տարածք

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտա-
 դիտարկումներ կատարվել են 7 բնադրյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաս-
 տիճանը և ծախսը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես
 նաև նշված 4 դիտակետում լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ
 դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:

